

**ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է <Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին> Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-188 օրենքի 12-րդ հոդվածի համաձայն:

Հաշվետվությունն ընդգրկում է 2011թ. օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

Հաշվետու ժամանակաշրջանում գործողության մեջ է եղել <Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին> Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 31-ի ՀՕ-124-Ն օրենքը (այսուհետ՝ Ծրագիր): <Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի համաձայն՝ <Եթե ծրագրի գործողության ժամկետը լրանալուց հետո նոր ծրագիր չի ընդունվում, ապա շարունակում է գործել նախորդ ծրագիրը> և <Նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ձեռնարկությունները) և <փոքր> օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից>: Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման նոր ծրագիր չի ընդունվել և Ծրագրում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Ծրագրում ընդգրկված՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայության՝ փաստացի գործունեություն չծավալող և ակտիվներ չունեցող <Ռազմականացված լեռնափրկարար ջոկատ> ՓԲԸ-ն /ծածկագիր՝ 90011/ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1117-Ա որոշմամբ վերակազմակերպվել է՝ <Ռազմականացված լեռնափրկարար զորամասերի շտաբ> ՓԲԸ-ի հետ միաձուլման ճանապարհով: Արդյունքում գրանցվել է <<Հատուկ լեռնափրկարար ծառայություն>> ՓԲԸ-ն, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում գործող ստորգետնյա հանքերի շահագործման անվտանգությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնած օրենսդրական փոփոխությունները և իրականացրած միջոցառումներն ուղղված են եղել Ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը: Շարունակվել է մասնավորեցման այն քաղաքականությունը, որը հնարավորություն է տալիս մասնավորեցվող ընկերություններում առավելագույնս ներդրումներ կատարել և ընկերությունները վաճառել ռազմավարական ներդրողներին:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայության, ոչ փաստացի գործունեություն և ոչ էլ որևէ ակտիվ ունեցող, <Ռազմականացված լեռնափրկարար ջոկատ> ՓԲԸ-ն /ծածկագիր՝ 90011/ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1117-Ա որոշմամբ վերակազմակերպվել է՝ <Ռազմականացված լեռնափրկարար զորամասերի շտաբ> ՓԲԸ-ի հետ միաձուլման ճանապարհով: Արդյունքում գրանցվել է <<Հատուկ լեռնափրկարար ծառայություն>> ՓԲԸ-ն, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում գործող ստորգետնյա հանքերի շահագործման անվտանգությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում բաժնետոմսերի ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է

Ծրագրում ընդգրկված 3 ընկերություն, որոնցից 2-ը մասնավորեցվել է ռազմավարական ներդրողներին:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 365,9 մլն դրամ, որից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին մուտքագրվել է 283,076 մլն դրամը:

Համաձայն <Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին> (ՀՕ-128-Ն), <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին> (ՀՕ-127-Ն) և <Բյուջետային համակարգի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին> (ՀՕ-126-Ն) Հայաստանի Հանրապետության օրենքների՝ 2011 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ է փոխանցվել 82,8 մլն դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգով յուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության և գույքի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ինտերնետային կայքում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

2.1. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

2.1.1. Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման կատարողականը

Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 3 ընկերություն: Ընկերություններից 2-ի բաժնետոմսերը վաճառվել են նախօրոք հայտնի գնորդին, իսկ 1-ինը՝ աշխատավորական կոլեկտիվին:

Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Նեյտրոն ԳԱՄ» և «Բազալան» ՓԲԸ-ների գնորդ «Մոսսթոն էնջինիրինգ» ընկերությունը պարտավորվել է պայմանագրի կնքումից հետո երկու տարվա ընթացքում մասնավորեցված ընկերություններում կատարել 3 400 000 հազ. դրամի չափով ներդրումներ, երկու տարվա ընթացքում ապահովել 180 նոր աշխատատեղ, տասը տարվա ընթացքում չփոխել մասնավորեցված ընկերությունների հիմնական գործունեության ուղղվածությունը (պրոֆիլը), ապահովել մասնավորեցված ընկերություններում պետական պատվերների առաջնահերթ կատարումը, ապահովել մասնավորեցված ընկերությունների մասնակցությունը սահմանված կարգով հաստատված զորահավաքային ծրագրերին և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանն ազատել իր նկատմամբ ունեցած կրեդիտորական պարտքի գումարից՝ 2 384 144 հազ. դրամի չափով:

Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված ընկերությունների և դրանց գնորդների ստանձնած ներդրումային պարտավորությունների մասին տեղեկությունները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված ընկերությունների մասին

N	Ընկերության (պետական գույքի) անվանումը, ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Գտնվելու վայրը	ՀՀ նախարարու-թյունը, պետական կառավարման մարմինը	ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Պետական գույքի գնահատված արժեքը (հազ. դրամ)	Վաճառքի գինը (հազ. դրամ)	Ընկերության հաշվեկշռում ամրագրված պարտավորությունները (հազ. դրամ)	Ներդրումային և այլ պարտավորությունները՝ ըստ մասնավորեցման պայմանագրի	Մասնավորեցման պայմանագրի կնքման ամսաթիվը	Գնորդը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	<Հրագդան -7> ՊՓԲԸ (62411)	քաղ. Երևան, Կառավարական շենք 1	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 840-Ն 17.06.2011 թ.	287	287	-	-	16.09.2011թ.	Աշխատավորական կոլեկտիվ
2.	<Նեյտրոն ԳԱՄ> ՓԲԸ (90047)	քաղ. Երևան, Բագրատունյաց ց 73	ՀՀ պաշտպանության նախարարություն	N 714-Ն 21.06.2007 թ.	130524 5	19425	885673	Երկու տարվա ընթացքում 3400 մլն դրամի չափով ներդրումներ, 180 նոր աշխատատեղ՝ ամսական միջին աշխատավարձը դարձնելով 80 հազ. դրամ	12.04.2011թ.	Նախօրոք հայտնի գնորդ <Մոսսթոն> էնջինիրինգ ԼԹԴ> ընկերություն
3.	<Բազավան> ՓԲԸ (90048)	քաղ. Աշտարակ, Բազավան 2	ՀՀ պաշտպանության նախարարություն	N 714-Ն 21.06.2007 թ.	104445 8	15575	219201			

2.1.2. Մասնավորեցման գործարքների արդյունքում ստանձնած պարտավորությունները, դրանց կատարումը

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցված ընկերությունների և մասնավորեցման օբյեկտների նոր սեփականատերերը ներդրումային և սոցիալական պարտավորություններ են ստանձնել հետմասնավորեցման տարիների համար:

Պետական գույքի մասնավորեցման գործընթացի արդյունավետությունը պայմանավորվում է նաև մասնավորեցման սուբյեկտների ստանձնած պարտավորությունների կատարմամբ, որոնք վերահսկվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի մասնավորեցման պայմանագրերով Վարչության վերահսկողության ներքո է գտնվել 12 գնորդների ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը, որոնց կողմից ստանձնած ներդրումային պարտավորությունները կազմել են 167,0 մլն ՀՀ դրամ և 4,0 մլն ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների ապահովման մասով նախատեսվել է ապահովել 2 513 աշխատատեղ:

Վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներով մասնավորեցման պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կատարել են թվով 10 գնորդներ, որոնց կողմից կատարված ներդրումները կազմել են 305,2 մլն ՀՀ դրամ, իսկ սոցիալական երաշխիքների ապահովման մասով՝ ապահովվել է 2920 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված պայմանագրային պարտավորությունները չի կատարվել 1 գնորդի կողմից, որը կազմել է սոցիալական երաշխիքների ապահովման մասով 10 աշխատատեղ:

<Դվին> հյուրանոցային համալիր>-ի գնորդը պարտավորվել էր մինչև 31.12.2011թ. կատարել 4,0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ներդրում, սակայն պարտավորությունների կատարման ժամկետների փոփոխության վերաբերյալ ներկայացվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Նախորդ տարիներին մասնավորեցված ընկերությունների և օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին տեղեկությունները, ըստ առանձին ընկերությունների և օբյեկտների, ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

մասնավորեցված ընկերությունների և անավարտ շինարարության օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակաշրջանում ժամկետները լրացած ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման մասին

</>	Անվանումը, գտնվելու վայրը, գնորդը, պայմանագրի համարը և ամսաթիվը	Մասնավորեցման ձևը, վաճառքի գինը (հազ. դրամ)	Պարտավորությունները	Կատարման ժամկետները	Պարտավորության կատարումը
1	2	3	4	5	6
1	<Ղվին> հյուրանոցային համալիր» ՓԲԸ, ք. Երևան, Պարոնյան փող. 40, <Կովկասյան կոմունիկացիոն խումբ> ՓԲԸ, ք. Երևան, Սարյան 20 686-Ու, 14.05.2004թ. /Պայմանագրի փոփոխություն 04.02.2010թ./	ուղղակի վաճառք 100 000 ԱՄՆ դոլար	Կատարել 4,0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում:	31.12.2011	Ներկայացվել է պարտավորությունների կատարման ժամկետների փոփոխության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ:
2	<Մարտունու գ/կ տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան> ՊՓԲԸ-ի կազմից առանձնացված ոչխարների էլևերի ԱՇՕ, Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն, Վրույր Ասլանյան, Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն: 267-Մ 18.05.2006թ. 267/3-Մ 24.11.2009թ	մրցույթ 1 250,0	Ստեղծել 4 մշտական և 6 ժամանակավոր /3 ամսով/ աշխատատեղեր՝ 25 000 ՀՀ դրամ աշխատավարձով:	31.08.2011	Ներկայացվել է հայցադիմում:
3	<Սիսիանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան> ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Իսրայելյան փող. աշխատավորական կոլեկտիվ 849-Ու 11.01.2008թ.	ուղղակի վաճառք 5 433,0	Ապահովել 5 աշխատատեղ՝ 30 000 ՀՀ դրամ աշխատավարձով:	11.01.2011	Ապահովվել է 5 աշխատատեղ՝ 30 000 ՀՀ դրամ աշխատավարձով:
4	<Անդրոն> գիտահետազոտական ինստիտուտ-տեխնոպարկ> ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր, ք. Երևան, Մանանդյան 33: <ՍՆԱՌՏ> ՍՊԸ ք. Երևան, Հ. Հովսեփյան 31 լիազ. անձ՝ Հայրապետ Թորգոմյան: 854-Ու 21.03.2008թ.	ուղղակի վաճառք 94 092,0	Կատարել 20,0 մլն ՀՀ դրամի ներդրում: Ապահովել աշխատատեղով 144 մարդ/ամիս՝ 100 000 ՀՀ դրամ միջին աշխատավարձով:	21.03.2011 21.03.2011	Կատարվել է 21 092,0 հազ. ՀՀ դրամի ներդրում: Ապահովվել է աշխատատեղով 217 մարդ/ամիս՝ 146 872 ՀՀ դրամ միջին աշխատավարձով:

5	Երևան քաղաքի Ջրվեժ թաղամասում գտնվող Վարդաշենի բազալտի հանքավայրի՝ 334,7 ք.մ մակերեսով շենքեր և 552,9 ք.մ մակերեսով շինություններ, <Վարդաշենի հանք> ՍՊԸ ք. Երևան, Վարդաշենի հանք, տնօրեն՝ Գևորգ Սմբատյան 853-Ու 31.01.2008թ	ուղղակի վաճառք 3 400,0	Կատարել 7,0 մլն ՀՀ դրամի ներդրում: Ստեղծել 10 աշխատատեղ:	31.01.2011 31.01.2011	Կատարվել է 7 729,0 հազ. ՀՀ դրամի ներդրում: Ստեղծվել է 38 աշխատատեղ:
6	Գյումրի քաղաքի Սավոյան 7 հասցեում գտնվող ՀՊՃՀ-ի Գյումրու մասնաձյուղի ուսումնական բարձրագույն մասնաշենքի ԱՇՕ, Մակի Փանոսյան, ք. Գյումրի, Խանջյան 4շ., բն. 1: 246/1-Մ 22.07.2008թ.	մրցույթ 3 637,0	Կատարել 4,0 մլն ՀՀ դրամի ներդրում:	22.07.2011	Կատարվել է 5 081,0 հազ. ՀՀ դրամի ներդրում:
7	<Կոմետա -1> ԲԲԸ-ի 80% բաժնետոմսեր ք. Աշտարակ, Գիտավան-2, աշխատավորական կոլեկտիվ, 855-Ու 09.04.2008թ.	ուղղակի վաճառք 41 036,0	Ապահովել 144 մարդ/ամիս աշխատատեղ՝ 80 000 ՀՀ դրամ միջին աշխատավարձով	09.04.2011	Ապահովվել է 162 մարդ/ամիս աշխատատեղ, 87 591 ՀՀ դրամ միջին աշխատավարձով:
8	Վանաձոր քաղաքի Մաշտոցի թիվ 1 հասցեում գտնվող՝ 5264,74 ք.մ մակերեսով <Վանաձորի հյուրանոց> ԱՇՕ, Սամվել Գրիգորյան, Գուգարքի շրջ. գ. Գուգարք, 10-րդ փող., տուն 27ա 859-Ու 20.01.2009թ.	ուղղակի վաճառք 42 366,0	Կատարել 45,0 մլն ՀՀ դրամի ներդրում:	20.01.2011	Կատարվել է 48,0 մլն ՀՀ դրամի ներդրում:
9	<Երևանի բեռնման և բեռնաթափման ուղեմաս> ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 95, «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ, ք. Երևան, Աբելյան 6/1862-Ու 26.08.2010թ	ուղղակի վաճառք 480 935,0	Կատարել 50,0 մլն ՀՀ դրամի ներդրում:	07.09.2011	Կատարվել է 180 108,0 հազ. ՀՀ դրամի ներդրում:
10	<Ուադիո> ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, <ԵվրոՊրեսս Գրուպ> ՍՊԸ, Վենդյա պող., 56, 1203, Ժնև, Շվեյցարիա, տնօրեն՝ Անուշավան Խաչատրյան 864-Ու 28.12.2010թ.	ուղղակի վաճառք 587 606,0	Կատարել 40,0 մլն ՀՀ դրամի ներդրում, ապահովել առնվազն 1800 մարդ/ամիս աշխատատեղ /յուրաքանչյուր ամիս միջինը 150 մարդ/, միջին ամսական 100 000 ՀՀ դրամ աշխատավարձով	29.12.2011 29.12.2011	Կատարվել է 40,0 մլն ՀՀ դրամի ներդրում, Ապահովվել է 1956 մարդ/ամիս, 141.000 դրամ միջին աշխատավարձով
11	Տավուշի մարզի Նոյեմբերյան	ուղղակի վաճառք	Կատարել 1,0 մլն ՀՀ դրամի ներդրում:	16.09.2011	Կատարվել է 3 140,0 հազ. ՀՀ դրամի

	քաղաքի Չորավար Անդրանիկի 6 հասցեում գտնվող՝ Նոյեմբերյանի կինոցանցի գույքի կազմից 1-ին և 2-րդ հարկերից 110 ք.մ ընդհանուր մակերեսով տարած, Հովիկ Աբովյան, Տավուշի մարզ, գ. Կողբ, 43-րդ փող., թիվ 7, 863-Ու 16.09.2010թ.	506,0			ներդրում:
12	<Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ> ՓԲԸ, Լոռու մարզ, Ախթալա, <Սեթլ Փրինս Էլ Թի Դի > ընկերություն Ավան P.O.Box 556, Main Street, Charlestown, Nevis Սեթրոք Տեր-Պողոսյան 427-Ու 10.10.2002թ. /Պայմանագրի փոփոխություն 18.11.2003թ./	ուղղակի վաճառք 200 000 ԱՄՆ դոլար	Ստեղծել 400 աշխատատեղ 110 000 դրամ միջին աշխատավարձով:	31.12.2011	Ապահովվել է 612 աշխատատեղ՝ 118.000 դրամ միջին աշխատավարձով

2.1.3. Ընկերությունների լուծարման և սնանկացման գործընթացը

<Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընկերությունները չմասնավորեցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացնում այդ ընկերությունների լուծարման մասին:

Լուծարված ընկերությունների գույքը կարող է մասնավորեցվել <Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ձևերով՝ որպես գույքի առանձին տարրեր, այդ գույքի կամ դրա մի մասի հիման վրա նոր ընկերություն ստեղծելու միջոցով, ինչպես նաև տրամադրվել կարճաժամկետ կամ երկարաժամկետ վարձակալության:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարման գործընթացում է գտնվել Ծրագրում ընդգրկված 38 առևտրային կազմակերպություն:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված կազմակերպություններից՝

ա) 7 կազմակերպության լուծարման գործընթացն ավարտվել է.

բ) 4 կազմակերպություն ճանաչվել է սնանկ.

գ) 1 կազմակերպության լուծարման հանձնաժողովի գործունեությունը դադարեցվել է:

Լուծարման գործընթացում գտնվող՝ <Աշոցքի բնակարանային կոմունալ տնտեսություն> ՊՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող <Աշոցքի հյուրանոց> ՂԶ-ի գույքը (ծածկագիր՝ 4841) Հայաստանի Հանրապետության ՂԱՀԿ ծառայության կողմից ձեռնարկության պարտքերի դիմաց բռնագանձվել և օտարվել է:

Լուծարվող կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունները մարելու նպատակով կազմակերպվել են մի շարք աճուրդներ, ինչպես նաև միջոցառումներ են ձեռնարկվել դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների լուծարման հանձնաժողովների կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում մարվել է շուրջ 49536,0 հազար դրամ կրեդիտորական պարտք, որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գծով՝ 10366,0 հազար դրամ, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության գծով՝ 4501,0 հազար դրամ, աշխատավարձի գծով՝ 31653,0 հազար դրամ և այլ կրեդիտորական պարտք՝ 3016,0 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարման և սնանկացման գործընթացի մասին տեղեկությունները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

հաշվետու ժամանակաշրջանում լուծարման և սնանկացման գործընթացի մասին

Հ/Հ	Ծածկագիրը՝ ըստ Օրագրի	Ընկերության (կազմակերպության) անվանումը	Հիմնադիրը	Լուծարման մասին ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Լուծարման ընթացքը
1	2	3	4	5	6
1.	80039	<Նաիրի> ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
2.	20197	<Միջտնտչին> ՓԲԸ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 446-Ա, 23.04.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
3.	89	<Անալիտսարք>ԲԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1610-Ա, 04.12.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
4.	60351	<Գյումրիի քաղաքային կառույցների ուղեմաս> ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1610-Ա, 04.12.2003թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
5.	60216	Գորիսի հրուշակեղենի ՊԶ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 137-Ա, 10.02.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
6.	62392	<Վարդենիսի գյուղ. կենդանիների արհեստական սերմնավորման կայան> ՊԶ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 137-Ա, 10.02.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
7.	20571	<Աշոցքի բնակարանային կոմունալ տնտեսություն> ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 515-Ա, 28.04.2005թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
8.	5328	Իջևանի գլխավոր պանրագործարան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
9.	11039	Փոքրաշենի բտման տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
10.	11050	Արտամետի կերերի արտադրության տնտեսություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
11.	60214	<Հայքրչին> ՊՓԲԸ-ի Կապանի տնտեսավարկային տեղամաս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
12.	60213	<Հայքրչին> ՊՓԲԸ-ի Սիսիանի տնտեսավարկային տեղամաս	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

13.	60153	<Երառասպասարկում>ՓԲԸ-ի արտադրական և սովորողների Ս/Ս թիվ 7 ՂԶ	Երևանի քաղաքապետարան	N 348-Ն, 23.02.2006թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
14.	20904.10	<Բաղրամյանի նավթամթերք> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 475-Ա, 19.04.2007թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
15.	62196	<Ջրիոս> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 117-Ն, 25.01.2008թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
16.	20376	<Գագարինի արտադրական բազա> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
17.	20581.1	<Ղեբեղ> հյուրանոց> ՊՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
18.	62401	<Քաջարանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 951-Ն, 20.08.2009թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
19.	90006	<Նոր ներդրումներ> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 227-Ա, 11.03.2010թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
20.	60158	<Արարատառասպա> ՊՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 891-Ա, 30.06.2011թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
21.	62079	<Ազրոնավթաբազա> ՊՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 891-Ա, 30.06.2011թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
22.	80228	<Շենկառ> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 997-Ա, 21.07.2011թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
23.	90036	<Գեոկոմպլեքս> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 997-Ա, 21.07.2011թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
24.	21425	<Վարդենիսի տպարան> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1172-Ա, 18.08.2011թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
25.	21408	<Էջմիածնի տպարան> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1172-Ա, 18.08.2011թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:
26.	90037	<Շինվերանորոգում> ՓԲԸ	<< կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 354-Ա, 31.03.2011թ.	Գտնվում է լուծարման գործընթացում:

27.	546	<Ազաթ> արտադրակոմերցիոն ֆիրմա> ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1071-Ա, 29.07.2004թ.	Լուծարված է:
28.	60044	<Աղանձոտ> ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 838-Ն, 23.07.2009թ.	Լուծարված է:
29.	62093	<Արարատի ճանապարհների շահագործման և շինարարական> ՊՓԲԸ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	N 728-Ա, 10.07.2008թ.	Լուծարված է:
30.	11037	Պազանչի կաթնահամալիր	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	N 1534-Ա, 21.11.2003թ.	Լուծարված է:
31.	20201	<Արեգ> ՊՁ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 252-Ն 12.02.2009թ	Լուծարված է:
32.	60341	<Քաշաթաղի ՃՇՇ> ՊՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 391-Ա 15.04.2010թ.	Լուծարված է:
33.	30000	<Շինարար> ՊՁ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 252-Ն 12.02.2009թ.	Լուծարված է:
34.	20581.1	<Վեբեր> ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1414-Ա, 03.12.2009թ.	Սնանկ
35.	21046	<Երևանի թիվ 6 ստոմատոլոգիական պոլիկլինիկա> ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 394-Ա, 14.04.2011թ.	Սնանկ
36.	21410	<Ալավերդու տպարան> ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1414-Ա, 03.12.2009թ.	Սնանկ
37.	20904.3	<Չագարինի նավթամթերք> ՓԲԸ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 394-Ն, 14.04.2011թ.	Սնանկ
38.	60034	ՌՏԻ-ի շինվերանորոգման վարչություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	N 1833-Ա, 17.10.2002թ..	Լուծարման հանձնաժողովի գործունեությունը դադարեցվել է

2.2. <ՓՈՔՐ> ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

2.2.1. <Փոքր> օբյեկտների մասնավորեցման կատարողականը

Համաձայն Ծրագրի 5-րդ հոդվածի՝ մասնավորեցման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված <փոքր> օբյեկտները համարվում են Ծրագրի մաս և ենթակա են մասնավորեցման <Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ձևերով:

Հաշվետու ժամանակաշրջանում <փոքր> օբյեկտ չի մասնավորեցվել :

Նախորդ տարիներին մասնավորեցված <Փոքր> օբյեկտներից հաշվետու ժամանակաշրջանում տարաժամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված պետական բյուջեի եկամուտները կազմել են 46 385,149 հազար դրամ: